Armenian Research & Academic Repository

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

The licensor cannot revoke these freedoms as long as you follow the license terms.

Under the following terms:

- **Attribution** — You must give appropriate credit, provide a link to the license, and indicate if changes were made. You may do so in any reasonable manner, but not in any way that suggests the licensor endorses you or your use.
- **NonCommercial** — You may not use the material for commercial purposes.

37530
շ-կ.
ալ.

37527
շ-կ.

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

ողորմեա

[illegible]

[illegible]

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
## ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
## ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ։

Ցուցմամբ առաջի դնելն սահմանք և բաժանմունք և պարագայք մասանց բանի. և կանոնք համաձայնութեան նոցա ընդ միմեանս։

Յօրինեալ ըստ նախնի ուղղախօսութեան՝ 'ի Հայր Միքայէլ Վարդապետէ Չամչեանց Կոստանդնուպօլսեցւոյ։

Եւ Աէրատին Տպագրեալ 'ի Մարդասիրական Տպարանի։

'Ի ԿԱԼԿԱԹԱՅ։

'Ի Հայրապետութեան Տեառն Եփրեմ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց։

Յամի Տեառն
1823։

37530

[illegible]

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
# ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ։

## ԳԼՈՒԽ. Ա.

Թէ զի՛նչ իցէ քերականութիւն, և զո՛յք իցեն գլխաւոր մասունք՝ ի նմա։

Քերականութիւն է արուեստ ուղիղ խօսելոյ՝ և անսխալ շարադրելոյ։

Գլխաւոր ուսանելիք ՝ի քերականութեան՝ են չորք. գիր, վանկ, բառ, և բան։

Գիրն է գիծ ինչ նշանակիչ տառի։ Իսկ տառն է հըն-չումն ինչ յօդելի և հեգելի. զի յօդի ընդ այլում հնչման. և հեգեալ ընդ նմա՝ հնչէ զկատարեալ ձայն։

Վանկն է ձայն ինչ, որ միով հնչմամբ ելանէ ընդ բե-րան մարդոյ՝ բաղկացութեամբ ձայնաւոր և բաղաձայն տառից. որգոն, *մա. պէն. Ա։

Բառն է ձայն նշանակական. այսինքն այնպիսի ձայն, որ կար-գեալ է ՝ի նշանակել ինչ։ Եւ բաժանի յութն ազգս. որք են՝ անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, նախա-դրութիւն, մակբայ, շաղկապ, և միջարկութիւն։

Բանն է շարամանութիւն բառից՝ յայտնօղ տրամախո-հութեան մտաց։ Եւ է կրկին. կատարեալ, և անկատար։

Կատարեալն է, որ անթերի յայտնէ զդատմունս մտաց. զոր օրինակ, *Թագաւոր արդար կանգնէ զաշխարհ||։

Իսկ անկատարն է, որ տայ զկիսկատարութիւն իմանա-լոյ զդատմունս մտաց, բայց ոչ աւարտէ. զոր օրինակ, *եթէ անսայցես||. յոր թէ յարեսցի բայ ինչ, կատարի. զոր օրինակ, *եթէ անսայցես, ապրեսցես||։

Մասունք

Մասունք բանի են ութն ազգ բառից. անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ և միջարկութիւն ։

## Յաղագս անուան ։

Անունն է մասն բանի, որով իւր յորջորջի. այսինքն է՝ այնպիսի բառ, որով իւր ասի այս ինչ։ կամ որ զէութիւն իւրն նշանակէ. զորօրինակ, *ծառ, լոյս. երկիւղ. ջուր. եւն ։

Անունն բաժանի յերկուս, 'ի գոյական և յածական ։

Գոյական անունն է, որ ինքնին վարի 'ի բանս, և նշանակէ զիրս էականս, կամ իբր էականս. զոր օրինակ, *մարդ. հայ. սէր. օրհնութիւն. եւն ։ Եւ բաժանի 'ի յատուկ, 'ի հաւաքական, և 'ի յընդհանուր ։

Յատուկն է, որ կարգեալ է զմիոջէ միայն ասել. զոր օրինակ, *Մովսէս. Սիոն. Նեղոս. եւն ։

Հաւաքականն է, որ զհաւաքեալ իրս իբրև զմի նշանակէ. զոր օրինակ, *գունդ. ժողով. չեղջ. եւն ։

Ընդհանուրն է, որ զհասարակ ինչ բազմաց՝ նշանակէ. զոր օրինակ, *ծաղիկ. գլուխ. բարութիւն. եւն ։

Ածական անունն է, որ ինքնին ոչ վարի 'ի բանս, այլ պահանջէ յարիլ 'ի գոյականս՝ իբր յայտնիչ որպիսութեան նոցա. զորօրինակ, քաղցր. դառն. բազում. սակաւ. մեծ. փոքր. անզգամ. արդար. եւն. որք յարելով 'ի գոյականս վարին. որպէս, *քաղցր ջուր. դառն պտուղ. բազում աշխատանք. սակաւ ժամանակ. եւն ։

Ածականք բազում անգամ զօրութիւն ունին գոյականաց. զորօրինակ, *մեծն 'ի փոքուն ճանաչի ||. այսինքն մեծ իրն 'ի փոքու իրի ։ *անզգամն անգոսնէ զխրատ հօր ||. այսինքն այր անզգամ ։ *աղբիւր կենդանեաց՝ բերան արդարոյ ||. այսինքն բերան առն արդարոյ ։

Ածական անունն բաժանի յերիս, 'ի դրական, 'ի բաղդատական, և 'ի գերադրական ։

Դրականն

Դրականն է, որ ցուցանէ զորպիսութիւն կամ զքանակութիւն իւրին պարզապէս՝ առանց ճոխացուցանելոյ՝ կամ նուազեցուցանելոյ. օրինակ, * բարձր. խոնարհ. աղտեղի. պայծառ. սուրբ. մաքուր. վեհ. զօրաւոր. եւն։

Բաղդատականն է, որ բաղդատելով զմի իր ընդ այլում՝ իւրի՝ ցուցանէ զորպիսութիւն նորին առաւելեալ կամ նուազեալ քան զմիւսոյն. օրինակ, * բարձրագոյն. խոնարհագոյն. եւն։ կամ, * եւս աղտեղի. եւս պայծառ. եւն։

Գերադրականն է, որ ցուցանէ զորպիսութիւն իւրին յոյժ առաւելեալ՝ կամ յոյժ նուազեալ քան զայլոյն. օրինակ, * ամենասուրբ. ամենամաքուր. եւն։ կամ, * եւս վեհագոյն. եւս զօրաւորագոյն. եւն։

### Յաղագս պարագայից անուան ։

Պարագայք անուանց են այնք, որք յանուանս մտածին՝ իբր հետեւումն որպիսութեան նոցա. և են վեց. սեռ, ձև, տեսակ, թիւ, հոլով և հոլովումն։

Սեռք անուանց են որոշմունք գոյական անուանց ըստ նշանակելոյ նոցա զսեռս իւրեայ. Եւ են չորս. արական, իգական, հասարակ, և չեզոքական.

Արականն է, որ նշանակէ զարու. օրինակ, * Գրիգոր. Աբգար. հայր. քեռի. ցուլ. քաղ. եւն։

Իգականն է, որ նշանակէ զէգ. օրինակ, * Եսթեր. Հեղինէ. մայր. հանի. կով. մաքի. եւն։

Հասարակն է, որ միով ձայնիւ նշանակէ զարու և զէգ. օրինակ, * զաւակ. կորիւն. ձի. արջ. եւն։

Չեզոքականն է, որոյ նշանակեալն ոչ արու է, և ոչ էգ. օրինակ, * հուր. այգի. ժամն. մեծութիւն. եւն։

Ձևք անուանց են որպիսութիւնք նոցա՝ ըստ պարզութեան, ըստ բարդութեան և ըստ բաղադրութեան։ Ուստի և անուանք ըստ ձևոյն երեք են. պարզ, բարդ, և բաղադրեալ.

Պարզ անունն է, որ ոչ է զօդեալ ընդ այլում նշանական բառի, այլ կայ յինքեան միայնակ. օրինակ, * լոյս. բարի.

բալի · գօտի · բան · լի · ձեռն · աղօթք · որբն · ևն:
Բարդն է, որ յերկուց նշանական բառից զօդեալ է՛ի մի անուն · երբեմն ՚ի ձեռն տառից՝ ա, է, ե, ո · զո՛րօրինակ * լուսատու · բարեկրօն · գօտեմարտ · բանիբուն · լիուլի : եւ երբեմն առանց այսպիսի տառից · զո՛րօրինակ ·
* ձեռնատու · աղօթկեր · որբուներանք · ևն :
Ընդ բարդս դասին եւ քանի մի անուանք, որք յերկից բառից զօդին ՚ի մի անուն, եւ կոչին յարաբարդք · զո՛րօրինակ, * երեքտասանամեայ · նորակերտապանծ · հրազինազգեա · ևն :
Բաղադրեալն է, որ յառաջոյ զօդեալ ունի զանշան մասնիկ ինչ · զո՛րօրինակ, * անձաւ · աւերախտ · պղեղ · համաձայն · փառաղեպ · ևն :
Տեսակք անուանց են որպիսութիւնք նց ըստ նախնական եւ ըստ ածանցական նշանակութեան : Ուստի եւ անուանք երկու են ըստ տեսակին · Նախագաղափար, եւ ածանցական · Նախագաղափար՝ կամ նախատիպ անունն է, որ կայ յառաջին նշանակութեան իւրում, կամ յայնմ որպիսութեան, զոր ինքնին նշանակէ · զո՛ր օրինակ, * աւանդ · բան · հուր · հող · կոյս · երկնագեա · անմիտ · ևն :
Ածանցական անունն է նոյն նախատիպ անունն ՚ի ձեռն ածանցակերտ անուանշան մասնկանց կերպարանեալ, եւ ածել յայլ իմն եղանակ նշանակութեան · զո՛ր օրինակ, * տառապութիւն · բանաւոր · հրային · հողեղէն · կուսանոց · երկնապետական · ևն :
Ոմանք յայսպիսի անուանց երբեմն ՚ի կրկին մասնկանց ածանցին, եւ կոչին կրկնածանցական · զո՛ր օրինակ, * թագաւորական · արգականութի · ևն :
Ածանցականակերտ՝ կամ ածանցիչ մասնկունք են բազում · որգոն, * ած · ակ · իկ · իչ · ին · ի · այի · ային · եան · ական · աւոր · ոյ · ու · ութիւն · եղէն · ևն :
Իսկ տեսակք ածանցականաց են երեսուն · Հայրանունական · ազգական · տեղական · Հետեւողական · յարողական · զեղծական · տնկական · գոյացական · մածուցական ·

ծած-

ծածկողական· գործիքական· պարունական · վարողական ·
տուչական · ստացական · ունական · ընդունական · ար-
տաքրական · ենթակայական · թուական · առատական ·
նուազական · պակասական · ձեւական · հաղորդական ·
պաշտպանական · վերայական· բայածական · յարմարական·
և նոյնական ։

Թիւք անուանց են միութիւն և բազմաւորութիւն նշանա-
կութեան անուանց ըստ ձայնին ։ Եւ են երկու · եզական,
և յոգնական· կամ միաւորական, և բազմաւորական ։ Եզա-
կանն է, որ ըստ ձայնին զմի իր նշանակէ · զոր օրինակ՝
*սեղան · բեռն · ստամն · վաստթար · անմեղ · եւն ։ Իսկ
յոգնականն է, որ ըստ ձայնին զբազումս նշանակէ · զոր
օրինակ, *սեղանք · բեռինք · ստամունք · և այլն ։

Հոլով անուանց է դէսպէս փոփոխումն մի և նոյն ան-
ուան ՝ի սկիզբն կամ ՝ի վերջն, և կամ յերկոսին միան-
գամայն · և է տասն · ուղղական · ո՛րգոն, գործ · սեռա-
կան · ո՛րգոն ; գործոյ · եւն ։

Հոլովմունք անուանց են դէսպիսութիւնք վերջաւորու-
թեանց սեռական և գործիական հոլովից · և են քսան·
չորեքտասանքն համառակ, իսկ վեցքն յատուկ ։

Ըստ այսորիկ վերոյեդեալ վեց պարագայից՝ բառս հա-
լէլ՝ է անուն դոյական · ըստ սեռին՝ չեզոքական · ըստ
ձեւոյն՝ պարզ · ըստ տեսակին՝ նախադասից · ըստ թուոյն՝
եզական · ըստ հոլովին՝ գործիական · և ը հոլովմանն՝
հոլովի որպէս գետ, գետոյ, գետով ։

Դարձեալ՝ բառս ղը-ամբոխ՝ է ածական անուն դըրա-
կան · ըստ սեռին՝ համառակ, կամ անսեռ · ըստ ձեւոյն՝
բարդ · ըստ տեսակին՝ նախադասից · ըստ թուոյն՝ յոգնա-
կան · ըստ հոլովին՝ հայցական · և ըստ հոլովմանն՝ նախ-
դըսիմ և եթ հոլովի ։

## Յաղագս դերանուան ։

Դերանունն է մասն բանի, որ փոխանակ անուան
դնի, և առ որոշեալ դէմս վերաբերի ։ Եւ
բաժանի

բաժանին՝ ի հինգ տեսակս ․ որք են , էական ․ ստացական ․
ցուցական ․ յարաբերական , և դիմորոշական ․

Էականն է , որ գոյականապէս նշանակէ զդէմս իրին ․ որպի
են սոքա ․ * ես ․ դու ․ ինքն ․ իւր , իւրեան ․

Ստացականն է , որ ածականապէս նշանակէ զիմն որոշեալ
դիմաց ․ որպիսի են ս̃ք ․ * իմ ․ քո ․ մեր ․ ձեր ․ իւր , իւրոյ ․

Ցուցականն է , որ յանդիման ցուցանէ զիրն յերրորդ դէմս
ըստ կարգի ․ որպի են սոքա ․ * սա , դա , նա ․ այս , այդ ,
այն ․ սոյն , դոյն , նոյն ․

Յարաբերականն է , որ զօրութի յառաջ բերեալ ՚ի բանին
զնախընթաց կամ զյաջորդ բառն՝ դնի ՚ի տեղի նր , յոր
հոլով և պահանջեսցէ բանն ․ և է բառս՝ որ ․

Դիմորոշականք են երեքին տառքս այսոքիկ՝ ․․ ․ ը ․ ն ․ որք
իբր յօդք ինչ յարելով՝ իմաստս բանի՝ որոշեն զդէմսն ն̃ր ․

## Յաղագս պարագայից դերանուանց ․

Պարագայք դերանուանց են հինգ ․ տեսակ ,
դէմք , թիւ , հոլով , և հոլովումն ․

Տեսակք դերանուանց են երկու , որպէս և անուանցն ,
նախադասից՝ և ածանցական ․

Նախատիպք են սոքին ․ * իմ ․ քո ․ մեր ․ ձեր ․ իւր ․
ինքն ․ և այլն ․

Իսկ ածանցականք են սոքին , * մերային ․ քոյին ․ ձերոյին ․ իւրական ․ ինքնաւոր ․ ինքնութի ․ և այլն ․

Դէմք դերանուանց են յայտարարութիք որոշեալ անձանց ․ և են երեք ․ առաջին , երկրորդ , և երրորդ ․

Առաջին դէմքն է այն , յորմէ է բանն ․ զօրօրինակ , ես ․

Երկրորդ դէմքն է այն , առ որ է բանն ․ զօրօրինակ , դու ․

Երրորդ դէմքն է այն , զորմէ է բանն ․ զօրօրինակ , նա ․ ինքն ․

Առ երրորդ դէմս վերաբերին և դէմք այլոց դերանուանց , թէ ստացականաց և թէ ցուցականաց ․ թէպէտ ՚ի մէջ նոցա ևս գտանի կարգ դիմաց ․ զի ոմանք նկատին ա̄ առաջին դիմաց , որպ՝ իմ , մեր , և այլն ․ ոմանք բ̄ երկ-

երկրորդին, որպէս՝ քոյ, ձեր, և այլն. և ամենայն ըստ երրորդին, որպէս՝ իւր, իւրային, և այլն ։

Դարձեալ դերանունք են երկու, եզական և յոգնական ։

Եզականն է՝ որ իբրև զմի իր դիմաւոր նշանակէ. զոր օրինակ, * ես. դու. մեր. ձեր. և այլն ։

Յոգնականն է՝ որ իբրև զբազում դիմաւորս նշանակէ. զոր օրինակ, * մեք. դուք. մերք. ձերք. և այլն ։

Հոլով դերանուանց է պէսպէս փոփոխումն մի և նոյն դերանուան յինքեան. զոր օրինակ, * դու, քո, քեզ, զքեզ, ՚ի քէն, զքէն, քև, զքև, ՚ի քեզ, ով դու ։

Հոլովմունք դերանուանց են պէսպիսութիւնք հոլովից նոցա. զոր օրինակ, * ես, իմ. դու, քո. նա, նորա. և այլն ։

Ըստ այսոցիկ վերոյեդեալ հինգ պարագայից՝ բառս ես, է դերանուն եզական. ըստ տեսակին՝ նախադաս. ըստ դիմին՝ վերաբերի առ առաջինն. ըստ թուոյն՝ եզական. ըստ հոլովին՝ ուղղական. և ըստ հոլովմանն՝ հոլովի, ես, իմ, յինէն, ինև, և այլն ։

Դարձեալ՝ բառս ՚ի ձերոյ՝ է դերանուն ստացական. ըստ տեսակին՝ նախադաս. ըստ դիմին՝ կարգաւ երկրորդ. ըստ թուոյն՝ յոգնական. ըստ հոլովին՝ բացառական. և ըստ հոլովմանն՝ հոլովի որպէս՝ իմ, իմոյ, յիմոյ, և այլն ։

## Յաղագս Բայի ։

Բայն է մասն բանի, որ զառս, կամ զկիրս, և կամ զլինելութիւն իրաց ընդ ժամանակաւ նշանակէ՝ ըստ որոշեալ դիմաց. զոր օրինակ, * հեղում. փոխեմ. գնամ. լինիմ. և այլն ։

Բայք բաժանին յերկուս, յէական և յառաքական ։

Էականք են, որք նշանակեն զլինելութիւն իրին ընդ ժամանակաւ. և են չորեքին սոքա, * եղանիմ. լինիմ. եմ, և գոլ ։

Իսկ առաքականք են, որք նշանակեն զառնել ինչ՝ կամ ըղկրել. որպիսի են այլ ամ բայք. զոր օրինակ, * գրեմ. ջեռնում. արձակեմ. և այլն ։

Առաքական

Առաքական բայք բաժանին 'ի կանոնաւորս, և յանկանոնս ։ Կանոնաւորք են, որք 'ի խոնարհիլն անփոփոխս մնան ձայնիւն, անցելի ժամանակաւ և անպակաս դիմաւ․ որպիսի են սոքին․ * գործեմ․ աղամ․ թողում․ հաշտիմ․
և որ ըստ սոցօք․

Իսկ անկանոնք են, որք ամբողջապէս ոչ խոնարհին, այլ կամ պակասին 'ի ժամանակս ինչ, և յայլոց լրանան․ և կոչին պակասաւորք․ և են սոքին․ * ուտեմ, կերայ․ ըմպեմ, արբի․ լսեմ, լուայ․ ճանաչեմ, ծանեայ․ ունիմ, կալայ․ երթամ, չոգայ ։ Կամ այլայլին ձայնիւ և կոչին զարտուղիք․ և են սոքին․ * առնեմ, արարի․ դնեմ, եդի․ տամ, ետու․ մեղանչեմ, մեղայ․ յառնեմ, յարեայ․ գամ, եկի ։ Եւ կամ ըստ պատահման պակասին յառաջին և յերկրորդ դիմաւ․ և կոչին դիմազուրկք․ և են սոքին․ * յաջողէ․ լուսանայ․ թուի․ հարկ է․
և որ ըստ սոցօք ։

## Յաղագս պարագայից բայի ։

Պարագայք բայից են այնք, որք մտածին 'ի վերայ բայից՝ իբր հետևմունք ուղղութեան նոցա․ և են ինն․ սեռ, ձև, տեսակ, թիւ, դէմք, ժամանակ, եղանակ, խոնարհմունք, և լծորդութիւնք ։

Սեռք բայից են որոշմունք նոցա ըստ առնելոյ և կրելոյ․ և են չորք․ ներգործական, կրաւորական, հասարակ, և չէզոքական ։

Ներգործականք են, որք նշանակեն զներգործել իւիք առ կողմն․ զորօրինակ, * այրեմ․ վառեմ․ և այլն ։

Կրաւորականք են, որք նշանակեն զկրել իւիք 'ի ներգործողէ․ զորօրինակ, * այրիմ․ վառիմ․ և այլն ։

Հասարակք են, որք միով կրաւորական ձայնիւ մերթ նշանակեն զներգործել իւիք առ այլ, և մերթ զկրել իւիք յայլմէ․ զորօրինակ, * տանիմ․ ծնանիմ․ և այլն ։

Չէզոքականք են, որք զներգործութիւն գործողին յինքեան 'ի գոր-

՚ի գործօղն նշանակեն, և ոչ իբր ՚ի ներգործողէ առ կրօղ. Եւ են կրկին. ներգործակերպ, և կրաւորակերպ, կամ ձայնակրական ։

Ներգործակերպ չէզոքականք են, որք ըստ ներգործական բայից խոնարհին. զոր օրինակ, * գիմեմ. գնամ. գրօսնում. և որ ըստ սոքօք ։

Ձայնակրականք են, որք ըստ կրաւորական բայից խոնարհին. զոր օրինակ, * աշխատիմ. սնանիմ. փախչիմ. և որ ըստ սոքօք ։

Զեք բայից են որոշմունք նշ ըստ պարզութե, ըստ բարդութե և ըստ բաղադրութե. և են երեք. պարզ, բարդ, և բաղադրեալ ։

Պարզն է, որ առանց բաղկացութե ըստ այլում բառի՛ նշանակութի առից և կրից պարզապէս յայտ առնէ. զոր օրինակ, * բերեմ. կիզեմ. և այլն ։

Բարդն է, որ զօդեալ ըստ այլում նշանական բառի՛ զկըրկին իմաստն առից կամ կրից ՚ի մէջ բերէ. զոր օրինակ, * ընծայաբերեմ. բոցակիզեմ. և այլն ։

Բաղադրեալն է, որ բաղկանայ բաղադրական մասնկամբքս, ուր. ոտ. ան. տար. տ. և այլն. զոր օրինակ, * աւետաւորեմ. խոյոփեմ. անպատառեմ. պաշտամբերժեմ. տգիտանամ. և այլն ։

Տեսակք բայից են որպիսութիւնք նոցա՝ նկատեալք ըստ նախնական և ըստ ածանցական նշանակութեան իւրեանց. և են երկու. Նախադաղափար, և անցողական ։

Նախադաղափարք՝ կամ Նախատիպք են, որք նշանակեն միայն զառս գործողին. զոր օրինակ, * յառնեմ. լամ. յենում. պատկառիմ. և այլն ։

Անցողականք են, որք ոչ միայն զներգործութի առնողին, այլ և զգործել կրողին նշանակեն. զոր օրինակ, * յարուցանեմ. լացուցանեմ. յեցուցանեմ. պատկառեցուցանեմ. Եւն ։

Թիւք բայից մասնին ըստ եզականութեան և ըստ յոգնա-

յոգնա-

յոգնականութիւն նոցա. և են երկու. եզական, և յոգնական : Եզականն է, որ նշանակէ զմիակի գործողութիւն, կամ կրելութիւն միոյ՝ զոր օրինակ, * վառեմ. վառիմ. և այլն : Յոգնականն է, որ նշանակէ զբազում գործողութիս, կամ կրելութիւնս բազմաց. զոր օրինակ, * վառեմք. վառիմք. և այլն :

Դէմք բայից են, որք ցուցանեն զգործողութիւնս լինել որոշեալ անձին. և են երեք. առաջին, երկրորդ, և երրորդ :

Առաջին դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութիւն այնր, յորմէ է բանն. զոր օրինակ, * տամ. ետու. և այլն : Երկրորդ դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութիւն այնր, առ որ է բանն. զոր օրինակ, * տաս. ետուր. և այլն : Երրորդ դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութիւն այնր, զորմէ է բանն. զոր օրինակ, * տայ. ետ. և այլն :

Ժամանակք բայից են, որք ցուցանեն զառս կամ զկիրս լինել յայս ինչ ժամանակի. և են երեք. ներկայ, անցեալ, և ապառնի :

Անցեալն քառակի նկատի. զի՝ իբր անկատար, իբր կատարեալ, իբր յարակատար, և իբր գերակատար. և ըստ այսմ ժամանակք բայից առին լինել վեց, ներկայ, անկատար, կատարեալ, յարակատար, գերակատար, և ապառնի :

Եղանակք բայից են պէսպէս աստիճանք կամ կերպք նշանակելոյ նոցա զառս և զկիրս. և են չորք, սահմանական, հրամայական, ստորադասական, և աներևոյթ, կամ անորոշ :

Խոնարհմունք բայից են պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն բայի 'ի զանազան վերջաւորութիւնս, և 'ի դէմս, և 'ի ժամանակս, թէ ըստ եզականին, և թէ ըստ յոգնականին. զոր օրինակ, * պահեմ, պահես, պահէ. պահեմք, պահէք, պահեն. պահէի, պահէիր, և այլն : Եւ սոքա այնչափ են, որչափ են փոփոխութիւնք մի և նոյն բայի :

Լծոր-

Լծորդութիւնք բայից են պէսպիսութիւնք վերջաւորութեանց սահմանականի ներկային ․ և են չորք ․ առաջինն յանգեալ 'ի եմ ․ զոր օրինակ , գործեմ ։ երկրորդն 'ի ամ ․ զոր օրինակ , աղամ ։ երրորդն 'ի ում ․ զոր օրինակ , թողում ։ չորրորդն 'ի իմ ․ զոր օրինակ , հաւատիմ ։

Ըստ վերոյգրեալ ինն պարագայից՝ բառս այս [illegible]՝ է բայ կանոնաւոր ․ ըստ սեռին՝ ներգործակերպ չէզոքական ․ ըստ ձևոյն՝ պարզ ․ ըստ տեսակին՝ նախադասից ․ ըստ թուոյն՝ եզական ․ ըստ դիմին՝ երրորդ ․ ըստ ժամանակին՝ անկատար ․ ըստ եղանակին՝ սահմանական ․ ըստ խոնարհմանն՝ խոնարհի ընդ երկրորդ լծորդութեամբ՝ որպէս

ընթանամ , ընթայայ , ընթանայր ։

Դարձեալ՝ բառս [illegible]՝ է բայ կանոնաւոր ․ ըստ սեռին՝ ներգործական ․ ըստ ձևոյն՝ պարզ ․ ըստ տեսակին՝ անցողական ․ ըստ թուոյն՝ յոգնական ․ ըստ դիմին՝ երրորդ ․ ըստ ժամանակին՝ կատարեալ ․ ըստ եղանակին՝ սահմանական ․ ըստ խոնարհմանն՝ խոնարհի ընդ առաջին լծորդութեան՝ որպէս մատուցանեմ , մատուցի , մատուցին ։

## Յաղագս ընդունելութեան ։

Ընդունելութիւն է մասն բանի , որ նշանակէ զիրս յառնելութէ , կամ 'ի կրելութէ ․ և մերթ զառս կամ զկիրս ընդ ժամանակաւ ։ Եւ է չորս՝ ըստ չորից վերջաւորութեանց՝ ող , եալ , լոյ , լի ․ զոր օրինակ , * գնող ․ գնեալ ․

գնելոյ ․ գնելի ։

Պարագայք ընդունելութեանց են վեց ․ սեռ , ձև , տեսակ , և ժամանակ՝ ըստ բայից ․ թիւ , և հոլով՝ ըստ

անուանց ։

Եւ ըստ այսոցիկ պարագայից՝ բառս 'ի [illegible]՝ է ընդունելութի յանգեալ 'ի եալ ․ ըստ սեռին՝ կրաւորական ․ ըստ ձևոյն՝ բարդ ․ ըստ տեսակին՝ նախադասից ․ ըստ ժամանակին՝ անցեալ ․ ըստ թուոյն՝ յոգնական ․ ըստ հոլովին՝ բացառական ․

և հոլովի որպէս՝ գետ , գետոյ , 'ի գետոյ ։

Յաղագս

Ցուցակ նախադրութեան, մակբայի, շաղկապի, և միջարկութեան:

Նախադրութիւն է մասն բանի, որ՝ ի յարելն յանուանս ցուցանէ զպարագայս ինչ իրին, զոր անունն նշանակէ: Ոմանք՝ ի նախադրութեանց են հոլովակերտք. որգոն, * ՚ի, յ, առ, առ ՚ի, ց, ը, զ: և ոմանք հոլովառուք. որգոն, * ըստ. քան. վասն. ՚ի վերայ. ՚ի ներքոյ. և այլն:

Մակբայն է մասն բանի, որ զպարագայս գործողութեանց նշանակէ. որգոն, * ուր. երբ. զիարդ. միթէ. ահա. և այլն. և ունի երեսներեք տեսակս. որք են՝ որակական. քանակական. ժամանակական. տեղական. դասական. հարցական. ժողովական. համայնական. զատական. ստորասական. բացասական. արգելական. նմանական. ներհակական. սաստկական. յաճախական. նուազական. երազական. յանկարծական. յամրական. յայտնական. ծածկական. ցուցական. երկբայական. յօժարական. բռնադատական. կրկնական. նախընտրական. անպարտական. անձնական. ազգական. փոխարինական և գերերդմնական.

Շաղկապն է մասն բանի, որ յարէ ընդ միմեանս զմասունս բանի, նաև զնոյն իսկ զբանս. որգոն, * և. իսկ. թէ. զի. և այլն. և ունի վեշտասան տեսակս. որք են՝ բաղհիւսական. տրոհական. բացառոյական. անկատարական. նախընտրական. առաւելական. համեմատական. վարանական. թեական. մեկնական. յարացուցական. պատճառական. հետևողական. մակաբերական. սկզբնաւորական և թարմատար:

Միջարկութիւն է մասն բանի, որ զբնական կիրս հոգւոյն յայտ առնէ. որգոն, * ո՜վ. աւա՜ղ. վա՜հ. և այլն. և ունի վեշտասան տեսակս. որք են՝ երանական. ըղձական. զարմացական. զարհուրական. հառաչական. եղկական. աւաղական. ցաւակցական. կոչական. բացականչական. յորդորական. խնդական. գովողական. հեգնական. արհամարհական և երգիծական:

ԳԼՈՒԽ.

# ԳԼՈՒԽ · Բ ։

## Ցուցակ համաձայնութեան մասանց բանի ։

Համաձայնութիւնք մասանց բանի են կապակցութիւնք նոցա ընդ միմեանս՝ առ ՚ի կազմել զբան ։

Այս կապակցութիւնք լինին ութն եղանակաւ · Նախ՝ անուան ընդ անուան ։ Երկրորդ՝ դերանուան ընդ դերանուան · և ընդ անուան ։ Երրորդ՝ բայի ընդ անուան, ընդ դերանուան և ընդ ընդունելութեան ։ Չորրորդ՝ ընդունելութեան ընդ անուան և ընդ դերանուան ։ Հինգերորդ՝ նախադրութեան ընդ անուան, և ընդ այնս՝ որք իբր անուն հոլովին ։ Վեցերորդ՝ մակբայի ընդ բայի, և ընդ այնս՝ որք ունին զզօրութիւն բայի ։ Եօթներորդ՝ միջարկութեան ընդ բանի ։ Ութերորդ՝ շաղկապի ընդ բանի, և ընդ մասունս նորա ։

## Ցուցակ համաձայնութեան անուան ընդ անուան ։

Անուանք որովհետեւ կամ գոյական են, և կամ ածական, ՚ի գալ նոցա առ միմեանս՝ հարկ է, զի կամ գոյականք ընդ գոյականաց համաձայնեսցին, կամ ածականք ընդ ածականաց, կամ գոյականք ընդ ածականաց, և կամ ածականք ընդ գոյականաց ։

Արդ՝ գոյական անուանք երիւք կարեն համաձայնիլ ընդ գոյականաց ։ Նախ՝ իբր բացայայտիչ ։ Երկրորդ՝ իբր յատկացուցիչ ։ Երրորդ՝ իբր խնդիր ։ Քանզի

Նախ՝ յորժամ հարկ լինի ՚ի բանս յայտ առնել զնշանակութիւն անուան իրիք, թէ յինչ միտս դնի, կամ փոխանակ որոյ նշանակէ, յայնժամ ՚ի նոյն զայլ անուն առանց շաղկապի թողուլ և հոլովիւ համաձայն նմին · և այն լինի նմա բացայայտիչ · զոր օրինակ, * Եւ առեալ հրեշտակին զԱմբակում՝ տարաւ զնա ՚ի քաղաքն Բաբիլոնի ։ Ուր գոյական անունդ Բաբիլոն՝ է բացայայտիչ անուանս ՚ի քաղաքն · զի յայտ առնէ՝ թէ անուամբս քաղաք իմացեալ լինի աստ Բաբիլոն, և ոչ Նինուէ, կամ Գազա ։

Սոյնպէս

Սոյնպէս և յայս բանս, * Որ շինեցեր զտունս քո զեկեղեցի խնամատարութեամբ հօր իմ ||․ անունս զեկեղեցի՝ է բացայայտից անուանս զտունս․ զի յայտ առնէ, թէ բառս իւրատն՝ խնամեալ լինի առ եկեղեցին․ և ոչ թէ ստացուածքին, և կամ այլ ինչ շինուած ։ Ըստ այսմ և անունս յմ՝ է
բացայայտից անուանս՝ խնամատարութեան հօր ։

Երկրորդ՝ յորժամ հարկ լինի ՚ի բանս յայտ առնել, թէ արգելեալ նշանակեալն անուան իւրք՝ որոյ է, կամ որում յատկանայ, յարեմք ՚ի նոյն զայլ անուն՝ (և մերթ ՚ի սեռակ անուան գրերանուն, կամ նաև զընդունելութիւն և զդերբայս,) ՚ի սեռական հոլովի․ և այն լինի նմա յատկացուցիչ․ զոր օրինակ, * Լուսաւորեսցուք մանկունք ընդ խրատ հօր ||․ Որ անունս հօր՝ է յատկացուցիչ անուանս խրատ․ զի ցուցանէ, թէ խրատն այն՝ հօր է, և ոչ օտարի, կամ թշնամւոյ․ Սոյնպէս և յայս բանս, * Արեգական լոյս խաւարեցաւ ||․ անունս արեգական՝ է յատկացուցիչ անուանդ լոյս․ զի ցուցանէ, թէ այն լոյս՝ արեգական է, և ոչ ճրագի, կամ
հրոյ, և կամ այլոյ իրիք աստեղ ։

Եւ եթէ ոմանց լիցի յայսպիսիս նախդիր դնել, պարտ է յարել զայն ՚ի նախընթացն, թէ յատկացուցիչ իցէ այն, և թէ յատկացուցեալ․ զոր օրինակ, * Զիմոյ պատմացեք զթիւ մեղաց իմոց ||․ * Կալցուք յանձինս զհրեշտակացն սրբութիւն ||։ Այս նախդիր երբեմն կրկնի ՚ի վերայ երկուցն ևս, մանաւանդ եթէ անկցի ՚ի միջի բայ․ զոր-
օրինակ, * Զկենացն ետուր զհաց ||։

Երրորդ՝ յորժամ հարկ լինի գոյական անուանց առնուլ զխնդիր՝ յարեմք ՚ի նոսա զայլ անուն, (կամ ՚ի սեռակ անուան գրերանուն կամ զընդունելութիւն,) իբր խնդիր նոցա՝ ըստ պահանջելոյ նշանակութեան նոցին ։ Վասն զի ոմանք ՚ի գոյական անուանց ունելով զհաղորդութիւն ընդ բայից՝ ունին և նոքա պահանջեն խնդիր առնուլ ըստ որպիսութեան բայիցն․ որպիսի են բայանուանք․ իսկ թէ զինչ,
դիցուք զերիս կանոնս ։

37530

Կանոն . 1 . Անուանք , որք ունին զհաղորդութիւն ընդ ներգործական բայից , առնուն զխնդիր սեռի ՚ի սեռական հոլովն , և մերթ ՚ի հայցականն . զոր օրինակ ,

* Ձգման ձեռին . փչմամբ զհոգին ։

Եւ երբեմն ևս հանդերձ խնդրով սեռի առնուն նաև զխնդիր բնութեան յայնպիսի հոլով՝ զորպիսի պահանջեն բայքն , ընդ որոց ունին զհաղորդութիւն . զոր օրինակ ,

* Ձգման ձեռին ՚ի ծառն . փչմամբ ՚ի նոսա զհոգին ։

Կանոն . 2 . Անուանք , որք ունին զհաղորդութիւն ընդ կրաւորական բայից , առնուն զխնդիր սեռի ՚ի բացառական հոլովն . զոր օրինակ , * առաքմամբ ՚ի հօրէ ։ Եւ երբեմն նաև զխնդիր բնութեան . զոր օրինակ , * առաքմամբ ՚ի հօրէ յծ ։

Կանոն . 3 . Անուանք , որք ունին զհաղորդութիւն ընդ չեզոքական բայից , զայնպիսի խնդիր առնուն՝ զորպիսի պահանջեն բայքն, որոց հաղորդին . զոր օրինակ , * Գալստեամբ ՚ի տաճարն . հրաժարումն յծէ ։

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ ածականաց ։

Համաձայնութիւն գոյական անուանց ընդ ածականաց՝ է լինելն նոցա խնդիր ածականաց՝ համաձայն նշանակութե նոցին . վասն զի բազումք յածականաց՝ ըստ օրինակի գոյականաց՝ ունելով զհաղորդութիւն ընդ բայից , առնուն երբեմն զխնդիր՝ ըստ այսոցիկ երից կանոնաց ։

Կանոն . 1 . Ածականք ներգործականահաղորդք՝ ( այս որք ունին զհաղորդութիւն ընդ ներգործական բայից , ) առնուն զխնդիր սեռի ՚ի սեռական հոլովն . զոր օրինակ , * Ժառանգորդ արքայութե . մատակարար շնորհաց . կործանիչ մեհենից ։ Այլ որք ՚ի իչ յանգին , երբեմն փոխանակ սեռականին՝ առնուն զհայցականն . զոր օրինակ , * փարատիչ զխաւար տգիտութեան . լուսաւորիչ զաշխարհ ամ ։ Այսպիսի ածականք երբեմն բայ ՚ի սեռական կամ ՚ի հայ-

հայցական խնդրոյ՝ առնուն նաև զայլ խնդիր՝ ըստ պա-
հանջելոյ բայից, ընդ որոց ունին զհաղորդութիւն .
զո՛ր օրինակ, * մատակարար շնորհաց ազգի մարդկան .
փարատիչ 'ի մտաց զխաւար ագիտութե ։

Կանոն. 2. Ածականք կրաւորականահաղորդք՝ առնուն ըզ
խնդիր սեռի 'ի հոլովն բայառական. զո՛ր օրինակ, * զի-
րաշարժ 'ի հողմոյ . անքննին 'ի մարդկանէ ։

Կանոն . 3 . Ածականք չէզոքականահաղորդք՝ հասարա-
կօրէն զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջեն
բայքն՝ որոց հաղորդին . զո՛ր օրինակ, * հաւատար
հրեշտակաց. զուգակցութ առ որդիս . մաքուր 'ի մեղաց .
զօրաւոր բանիւք . մշտատև յաղօթս ։

Իսկ անուանք բայածականք այլազգ առնուն զխնդիր .
երբեմն 'ի սեռական հոլովն . զո՛ր օրինակ, * զերագոյն
քերովբէից ։ Երբեմն 'ի բայառականն . զո՛ր օրինակ,
* վսեմագոյն յիշխանաց ։ Երբեմն 'ի ներգոյականն . զո՛ր
օրինակ, * տկարագոյն յանասունս ։ Երբեմն և՝ մանա-
ւանդ թէ բազում անգամ՝ նախադրութեա քան . զո՛ր օրինակ,
* բարձրագոյն քան զերկինս ։

Սոյնպէս և անուանք թուականք և մասնականք և հար-
ցականք՝ հասարակօրէն առնուն զխնդիր 'ի բայառական
հոլովն. զո՛ր օրինակ, * երկու 'ի նոցանէ . ոմն 'ի հայոց.
ո՞ 'ի մարդկանէ ։

## Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ գոյականաց ։

Ածական անուանք յարեալ 'ի գոյականս՝ յայտ առ-
նեն զորպիսութիւն իւրեանց զորս գոյականքն նշա-
նակեն. և քանզի պէսպէս եղանակաւ յարին սոքա 'ի գոյ-
ականսն՝ պէսպէս համաձայնին ընդ նոսա՝ ըստ վեց կանոնաց ։

Կանոն . 1 . Ածական անուանք՝ յորժամ յետադասին գոյ-
ականաց, համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ .
զո՛ր օրինակ, * Ծառայք իմաստունք տիրեսցեն տե-
րանց անմտաց || ։

Կանոն . 2 . Ածական անուանք յորժամ նախադասին գոյա-
կանաց, ոչ համաձայնին ընդ նոսա՝ ոչ թուով և ոչ հո-
լովին, թէ մի իցեն և թէ բազում . զոր օրինակ, * Ու-
նայն բանիւք ընդդէմ զինին Ճշմարիտ և ուղղափառ վար-
դապետութեան || . Իսկ միավանկ ածականք՝ երբեմն հա-
մաձայն դնին . զոր օրինակ . * սուրբ պատարագին . նո-
րոց կտակարանաց :

Կանոն . 3 . Յորժամ ի մէջ նախադաս ածականի և յե-
տադաս գոյականի անկանի բայ, կամ ընդունելութիւն,
ածականն հասարակօրէն համաձայնի ը գոյականին՝ թո-
ւով և հոլովին . զոր օրինակ, * Երկայնագունից կա-
րօտիմք բանից || . * Ածայնով զինեալ զօրութեամբ || :
Այլ երբեմն անհամաձայն ևս դնի . զորօրինակ, * Գե-
րակայ եհաս իշխանութե || : *'ի զգայական ծածկեալ լուսոյ || :

Կանոն . 4 . Եթէ նախադաս ածականն ունիցի զգիմորոշա-
կան տառ, հասարակօրէն թուով և հոլովին համաձայ-
նի ընդ յետադաս գոյականին . զոր օրինակ, * Գոհացա-
րուք զմարդասէրն այ || :
Իսկ երբեմն առանց համաձայնութեան դնի . զորօրի-
նակ, * Որ տիրականդ իշխանութեան հաղորդս արարեր
զսուրբ զառաքեալսն || :

Կանոն . 5 . Եթէ նախադաս գոյականքն իցեն բազում,
յետադաս ածականն դնի ըստ թուոյն յոգնական, և ը
հոլովին համաձայն . զոր օրինակ, * Ողջոյն տաջիք Ան-
դրոնիկեայ և Յունեայ ազգականաց իմոց || :

Կանոն . 6 . Եթէ ածականն իցէ նախադասեալ գոյականին,
կամ գոյականն ածականին, նախդիրն դնի ՚ի վերայ նախա-
դասին . զոր օրինակ, * Դարձո զիս ՚ի չար սովորութեց
իմոց ՚ի բարի սովորութի || . * Ապականեն զբարս քաղցունս
բանք չարք || .
Եւ ևս՝ եթէ նախադաս ածականքն կամ գոյականքն իցեն
բազում, և ունիցին զշաղկապդ և, նախդիրն դնի ՚ի վե
ամի . զոր օրինակ, * Որ զհակառակասէր և զդժնդակ
վարս

մորս ուղղեսցէ···զսրովբէիցն կարգ ունի ||. * ՚Ի յայտ
և ՚ի փակեալս խաւարային բնակէր ||.
Եւ եթէ նախադաս ածականն կամ դերանունն լիցէ մի, իսկ յետադասքն լիցեն բազում, նախդրին ոչ միայն դնի ՚ի վերայ նախընթացին, այլ և ՚ի վերայ երկրորդ և երրորդ յետադասին. զոր օրինակ, * ՚Ի չար խորհրդոց, ՚ի բանից և ՚ի գործոց մերկեա՛ զիս ||. * Զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու տէր ||։ Ուրեք ուրեք ևս ոչ դնի. զոր օրինակ, * Փայլեցոյց զմիտ ուղղութեամբ և յաջողութեամբ ||. * Զարդարեցեր նոքօք զտիեզերս ՚ի զգեստ լուսափայլ և նորափետուրս ||։

## Յաղագս համաձայնութեան ածականին անուանց ընդ ածականաց ։

Ածական անուանք չորեքկին համաձայնին ընդ միմեանս. Նախ՝ երբ ածական. զորօրինակ,
* Անհամեմատ խորհրդատու ||։
Երկրորդ՝ երբ խնդիր. զոր օրինակ, * Հրաւիրատուք պարտականաց ||։
Երրորդ՝ երբ բացայայտիչ. զոր օրինակ, * Ուսուցանէ զմեզ այնպիսի լինել ( [illegible] ) հեզ և խոնարհ ||։
Չորրորդ՝ երբ յատկացուցիչ. զորօրինակ, * Դժուարինք հնազանդութեան՝ գիւղինք նմա երևին ||։

## Յաղագս համաձայնութեան դերանուանց ։

Դերանուանք հնգապատիկ են. էական, ցուցական, ստացական, յարաբերական, և փոխադարձական ։
՚Ի մէջ սոցա էական դերանունս ինքն՝ բազում անգամ կցի յայլ դերանուանսն՝ համաձայն թուով և հոլովիւ. և երբ մի վարի է նմ. զորօրինակ * Ես ինքն. դու ինքն. նա ինքն. սոյն ինքն. որ և ինքն. և այլն ։
Սոյնպէս յարին է միմեանս և ցուցական դերանուանք. զորօրինակ, * սոյն սա. դոյն այդ. նոյն այս. և այլն ։
Էական դերանուանքս՝ ես, դու, ինքն, նա, ( ես և

յու—

ցուցական դերանուանցս՝ սա, դա, նա, եւ կամ նմանապէս վա-
րեալք ), 'ի գործածելն իւր գոյական․ եւ ըստ գոյականն անուանց
Նախ՝ լինին յատկացուցիչ․ որ՛ր օրինակ, * զկեանս իմ․
զտուն քո․ ըստ իւր կամաց․ բանք սր․ գիրք դր․ վարք նր ։
Երկրորդ՝ լինին խնդիր անուանց, եւս եւ ընդունելութեց եւ
նախադրութեց․ որ՛ր օրինակ, * անմատոյց յիւրմէ․ խնամօղ
ինքեան․ վասն նորա ։

Երրորդ՝ լինին բայադրական 'ի ձեռն անուանց՝ համաձայն
թուով եւ հոլովիւ․ որ՛ր օրինակ, * Ես սա խօսեցայ ||․
* 'ի մէնջ յաշակերտացս Քրիստոսի փառաւորի պաշտօնն ԱՅ ||։
Չորրորդ՝ յարին յածականս եւ յընդունելութիւնս՝ համաձայն թուով
եւ հոլովիւ, որ՛ր օրինակ, * ԱԾ քաւեա զիս զմեղաւորս ||․
* Ձեզ նեղելոց հանգիստ ||։

Ցուցական դերանուանցս՝ սա, դա, նա, յորժամ հոլովին
սա, սորին, սմին․ դա, դորին, դմին․ եւ այլն․ հա-
մարակօրէն իբր ածական վարին՝ համաձայն ընդ գոյակա-
նաց՝ 'ի հինգ հոլովս միայն․ 'ի սեռականն․ որգոն, * սորին
խորհրդոյ ։ 'ի վերջահոլով տրականն․ որգոն, * դմին
կամնի ։ 'ի գործիականն․ որգոն, * նովին բանիւ ։ 'ի
բացառականն․ որգոն, * դսովին տեղեաւ ։ 'ի ներգոյա-
կանն․ որգոն, * 'ի դմին տան ։

Ցուցական դերանուանքս՝ այս, այդ, այն, իբր ածական
վարին․ եւ 'ի յարիլն յանուանս՝ հասարակօրէն համաձայնին
ընդ նմ թուով եւ հոլովիւ, որ՛ր օրինակ․ * այսր տեսու-
թե․ այդմ պաշտաման․ յաշխարհին յայնմիկ․ եւ այլն ։
Այլ սակաւ ուրեք անհամաձայն եւս դնին․ որ՛ր օրինակ,
* այս պատկերաւս․ յայդ նեղութեդ․ խորհրդոյն այն․ եւն ։
Եւ եթէ նկատես անուանն նախադիր ունիցի, նախադիրն միշտ
եւ յամի կրկնի նաեւ 'ի վր այսոցիկ դերանուանց․ որ՛ր
օրինակ, * Դու ես ապաւէն իմ 'ի նեղութէ յայսմանէ ||․
* Փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ ... օրհնելով
օրհնեցից զքեզ ||․ * Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել
հրաման Յօգոստոս Կայսերէ ||․

Յու-

Ցուցական դերանուանքս՝ սոյն, դոյն, նոյն, հաստատակօրէն նախադաս լինելով անուանց վարին . և զի ոչ միայն նախդրիւ հոլովին, առանց համաձայնութեան յարին՝ ի նմա . զո՛ր օրինակ, * ՚ի սոյն դատաստանաց . ՚ի դոյն սենեկի . ընդ նոյն չարչարանաց . և այլն ։

Ստացական դերանուանքս՝ իմ, քո, մեր, ձեր, իւր՝ իւրոյ, միշտ իբր ածական վարին . և ՚ի յարիլն յանուանս՝ միշտ համաձայնին ընդ նմա, թէ ՚ի նախադասիլն և թէ ՚ի յետադասիլն . ( բայց ՚ի չորից յոգնական հոլովից, որք են՝ ուղղական, հայցական, նախդրիւ տրական, և ներգոյական ) . զո՛ր օրինակ, * ՚ի տան հօր իմոյ օթևանք բազում են ‖ . * Տան քում վայելէ սրբութիւն ‖ . * Մի՛ գայթակղեսցին բազումք մերով գայթակղութեամբս ‖ . * Տեսանեն՝ զքաջութիւն ձերոյ նահատակութեանդ ‖ . * Ներհակ իւրոյն վարդապետէ օրինաց ‖ .

Այլ բազում ուրեք փոխանակ ստացական դերանուանց՝ դնին սեռական հոլովք էական դերանուանց՝ իբր յատկացուցիչ . զո՛ր օրինակ, * Իշխանութիւն քո զօրացան ‖ . * Բարեխօս իւր ուխտաւորացս ‖ . և այլն ։

Ասացի՝ բայց ՚ի չորից յոգնական հոլովից . զի ՚ի նոսին միշտ անհամաձայն դնին . զո՛ր օրինակ, * Ծառայք իմ . և ո՛չ իմք * զվաստակս քո . և ո՛չ քոյս . * ընդ դրունս ձեր . և ո՛չ ձերս . * ՚ի տունս մեր . և ո՛չ մերս ։

Յարաբերական դերանունս որ՝ ՚ի յարաբերելն զանուն, կամ զդերանուն՝ համաձայնի ընդ նմա ՚ի թուոյն . զո՛ր օրինակ, * Լո՛ւր որդեակ հօր քո, որ ծնաւ զքեզ ‖ ։ Իսկ ՚ի հոլովսն՝ դնի յայն հոլով՝ յոր դնելի է յարաբերելն . և այս՝ կամ իբր անուն բայի . կամ իբր խնդիր ; կամ իբր յատկացուցիչ, և այլն . զո՛ր օրինակ, * ԱՅ օթևան է անձն՝ որ յապաշխարութեան իցէ ‖ . * Սակաւ ողորմութեանդ՝ զոր արարեր, զբազմապատիկ պարտսն՝ զոր պարտէիր, թողցէ քեզ ԱԾ ‖ . * Ո՛չ կարէ կրել նա յոգիս իւր զբանս անխեթս, որոյ մտք ծանրացեալ իցեն ՚ի նիւթոյ երկրի ‖ .

Այլ

Այլ գիտելի է, զի սա երբեմն յարաբերէ զնախընթացն. զոր օրինակ, * Երանեալ է այր որ համբերիցէ փորձանաց ||։ Երբեմն զհետևեալն. զոր օրինակ, * Որ ստեղծ զշունչս ամենեցուն, նա գիտէ զամ ||։ Եւ երբեմն զօրութն ունի զյարաբերելին. զոր օրինակ, * Որ սիրէ զկեանս՝ խնայէ 'ի բերան իւր ||. փխ նա՝ որ սիրէ ։

Դիմորոշական յօդքս՝ ս, դ, ն, յարին յանուանս, 'ի դերանուանս, 'ի բայս և յընդունելութիւնս, և երբեմն նաև յայլ մասունս բանի՝ առ որոշումն դիմաց. զոր օրինակ, * տանս. քոյդ. ասէն. 'ի տառապելոցս. և այլն ։

Այլ երբեմն ունին սոքա փոխանակ միմեանց. զոր օրինակ, * Եւ զոր ասէս՝ այս է ||. * Ո՛չ յիշես՝ զոր ասացիդ քեզ ||. * Զոր առնեմն և արարից ||. * 'ի մէտ առ՝ զոր խօսիմս ||.

## Յաղագս համաձայնութեան բայի ։

Բայք կրկնակի համաձայնին ընդ անուանս, և ընդ այլ մասունս բանի. նախ՝ իբր ընդ այնս, որք առին անուն բայի. երկրորդ՝ իբր ընդ այնս, որք առին խնդիր բայի. որպէս յայս բան, * Կային սպան զՀաբէլ ||. բայս սպան՝ համաձայնի ընդ երկուց անուանցս Կայէն և զՀաբէլ ։ Որոյ առաջինն կոչի անուն բայի. և ցուցանէ զգործ գործողութե սպանանելոյն իբր զսպանօղն. և այն է անուանն՝ Կայէն ։ Իսկ երկրորդն կոչի խնդիր բայի. և ցուցանէ զընթակայն գործողութե սպանանելոյն. իբր զսպանեալն. և այն է Հայցական հոլովն՝ զՀաբէլ ։

Սոյնպէս և յայս բան. * Տրտնջօղն՝ թերահաւատ է ||. բառս տրտնջօղն՝ է անուն բայի. էն՝ է բայ. թերահաւատն՝ է խնդիր. Այլ թէ սոքա զիարդ պարտին համաձայնիլ. գիտցուք զհետագայս կանոնս ։

### Կանոնք վասն անուան բայի ։

Կանոն. I. Եթէ բայն լիցէ դիմաւոր, անուն բային դնի յուղղական հոլովի. զոր օրինակ, * Տրդատ յաղ-

յաղթեց Հուչէի || . Ուր վս֊ դիմաւոր գոլոյ բայիս յաղթեաց ;
անուն բային՝ որ է բառս Տրդատ՝ եղեալ է յուղղական
հոլովն ։ Իսկ եթէ բայն իցէ անդէմ, անուն բային իբր՝ի
բազումս դնի ՝ի սեռական հոլովն . զոր օրինակ, * Յաղ֊
թահարեալ Տրդատայ զՀուչէ՝ պատկեցաւ՝ի Գեխոկղեախա֊
նաւէ || . Ուր սեռական հոլովս Տրդատայ՝ է անուն բայիս
յաղթահարեալ ։ Այլ երբեմն յուղղական հոլովն ևս դնի .
զոր օրինակ, * Եւ Մուշեղ առեալ զզօրս իւր՝ խաղաց
յարևելս ||։

Սոյնպէս ևս եթէ բայն իցէ յերից դէմս յարակատար և
գերակատար ժամանակի, և անցելոյ ստորադասականին՝
չեզականն, անուն բային իբր՝ի բազումս դնի ՝ի սեռական
հոլովն . զոր օրինակ, * Թողեալ է իմ . տեսեալ էր քո .
լուեալ իցէ նր ։ Իսկ երբեմն դնի յուղղականն . զոր օրինակ,
* Թողեալ է արքայ . տեսեալ էր իշխանն . գնացեալ իցէ
դատաւորն ։

Կանոն . 2 . Եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային հա֊
մաձայնի ընդ նմա թուով և դիմաւ . զոր օրինակ, * Ճոխս
արքայացայ || . Ուր որպէս դիմաւոր բայս արքայացայ՝ ա
թուոյն է եզական, և լոկ դիմին՝ յառաջին դէմն . նոյն֊
պէս և անուն բային, այսինքն է ես՝ լոկ թուոյն է
եզական, և յառաջին դէմն ՝ի ձեռն յօդիս՝ ս . որպէս
թէ ասէր, ես Ճոխս արքայացայ ։

Այլ այսպիսի յօդ՝ երբեմն զօրութեամբ դնի, մանաւանդ
յերրորդ դէմն . զոր օրինակ, * Գայթակղեցին չարք
առաջի բարեաց . և ամպարիշտք կորկոտեցին առ դրունս
արդարոց ||։

Կանոն . 3 . Եթէ անուն բային իցէ բազում լոկ նոյն դի֊
մաց, բայն հասարակօրէն դնի յոգնակի . զոր օրինակ,
* Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅս ||։ Բայց երբեմն՝ի
հասարակ անուանս դնի ևս եզակի . զոր օրինակ, * Նա֊
խանձ և հակառակութիւն խռովեցոյց զԹագաւորութիւն ||։

Կանոն . 4 . Եթէ անուն բային իցէ բազում՝ի զանազան
դէմս,

դէմս , բայն դնի 'ի պատուականագոյն դէմն ։ և քանզի առաջին դէմքն է պատուականագոյն քան զերկրորդն , և երկրորդն քան զերրորդն , յայսպիսիս՝ բայն դնի յայն դէմս , որ պատուականագոյն է ։ զորօրինակ , * Ես և դու գնայաք 'ի միասին || ։ * Ժողովեսջիք անդր դու և

զօրք քո || ։

Կանոն ։ 7 ։ Եթէ անուն բային ըստ ձայնին իցէ եզական ։ իսկ ըստ նշանակութեան բազմաւորական , ( որպիսի են անուանք թուականք , ) բայն դնի յոգնակի ։ զորօրինակ ։ * Լաւ են երկու քան զմի || ։ * Անկան 'ի նոյանէ քսան

հազար այր || ։

Իսկ եթէ անուն բային իցէ հաւաքական , բայն երբեմն դնի յոգնակի , զորօրինակ , * Գունդ զօրացն դարձան || ։ * Ազգ եկին 'ի հիւսիսոյ || ։ Եւ երբեմն եզակի ։ զորօրինակ ։ * Ցրուեցաւ գունդն || ։ * Ծարաւեալ ժողովուրդն || ։

Այլ աստ պարտ է գիտել , զի երբեմն անուն բային զօրութեամբ դնի ։ զորօրինակ , * Մերժեցին զկարիս մարմնական կենցաղոյս || ։ Ուր զօրութեամբ իմանի անուն բային , այ~ նոքա ։ Եւ ներհակ այսմ՝ երբեմն բայն դնի զօրութեամբ ։ զորօրինակ , * Դէպ ժամանակ՝ այժմու

կեանքս || ։ Ուր զօրութեամբ գոյ բայս՝ է ։

Կանոնք չ~ խնդրոյ բայից ։

Բայք ներգործականք և կրաւորականք առնուն զկրկին խնդիր ։ այ~ զխնդիր սեռի , և զխնդիր բնութե~ ։ Իսկ չեզոքականք , ընդ որս և էականք՝ միայն զխնդիր

բնութե~ ։ ո~պ տեսցի յառաջիկայ կանոնսդ ։

Կանոն ։ 1 ։ Ներգործական բայք առնուն զխնդիր սեռի 'ի հայցական հոլովի ։ զորօրինակ , * Մէգ ծածկէ զճառագայթս արեգական ։ և զմիտս խաւարէ յոլով կերակուր || ։ Ուր հայցական հոլովս զճառագայթս՝ է խնդիր սեռի բայիս ծածկէ ։ և հայցական հոլովս զմիտս՝ է խնդիր

սեռի բայիս խաւարէ , այ~ խաւարեցուցանէ ։

Կանոն ։

Կանոն. 2. Կրաւորական բայք առնուն զխնդիր սեռի՝ ՚ի բայառական հոլովն. զոր օրինակ, * ՚ի մէնջ ուղղին գնացք առն ||. Ուր բայառական հոլովս ՚ի մէնջն՝ է
խնդիր սեռի կրաւորական բայիս ուղղին ։

Կանոն 3. Բայք ներգործականք և կրաւորականք բայ՚ի խնդրոյ սեռի՝ առնուն երբեմն զխնդիր բնութեան ըստ պահանջելոյ նշանակութեան իւրեանց՝ ՚ի պէսպէս հոլովս. ոմանք ՚ի տրականն, ոմանք ՚ի բայառականն, և ոմանք յայլս. զոր օրինակ, * Կոչեաց անօրէն իշխանն զՎասակ առ ինքն, և խոստացաւ նմա մեծութիւն բազում. զի քակեսցէ զուխտն հայոց ՚ի միաբանութենէ. և հաս-
տատեսցէ յՅին զհրաման Թագաւորին || ։

Կանոն 4. Չեզոքական բայք առնուն զխնդիր բնութեան ըստ պահանջելոյ նշանակութեան իւրեանց՝ ՚ի պէսպէս հոլովս. որպ. ասացաք զներգործականաց. զոր օրինակ, * Վասակ՝ որ օտարացեալն էր ՚ի սիրոյն Քի, հնազանդեցաւ տղոքանաց անօրէն իշխանին, և մատնեաց հնարիւք զբազումս. և որք հաւանեցան նմա, իջին ընդ նմա ՚ի դժոխս ||.

Յաղագս աներեւոյթ բայի ։

Աներևոյթ բայք որովհետև իբր անուն հոլովին, ՚ի գործածին երբեմն իբրև անուն գոյական. և լինին անուն բայի, խնդիր բայի, խնդիր անուան, խնդիր
ընդունելութեան. և այլն ։

Իսկ յորժամ իբր բայ վարին, լինին բազում անգամ արգելիչ խնդրոյ բայից. զոր օրինակ, * Որ կամիցի՝ զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա ||. Ուր աներևոյթ բայս կեցուցանել՝ ինքնին խնդիր լեալ կամիցին՝ արգելեալ է զխնդիր նր. և ինքն է առեալ զխնդիրն, որ է բառդ շահնչն ի-ր. որպ թէ ասէր, որ կամիցի զկեցուցումն անձին
իւրոյ՝ կորուսցէ զնա ։

Երբեմն ևս լինին նք տրական խնդիր բայի՝ իբր դերբայ կցորութեան ունելով զնախդիրդ ՚ի կամ առ՚ի. զոր օրինակ,
* Ճոլո-

* Ժողովէին ժողովուրդք բազումք՝ լսել և բժշկիլ ՚ի հիւանդութեանց իւրեանց ։։ ը՟ առ ՚ի լսել , և ՚ի բժշկիլ ։

## Յաղագս համաձայնութեան ընդունելութեանց ։

Ընդունելութիւնք յանգեալք ՚ի ող՝ միշտ իբր ածական անուն վարին . և ը՟ կանոնի համաձայնութեան ածականաց յարին ՚ի գոյականս . զորօրինակ , * ՚Ի բա՛ց կաց ՚ի գժտօղ բերանոյ ։։ * Սակաւ օգտեն խրատք՝ առ բարկացողի ։։

Սոքա ՚ի վարիլն ներգործականապէս՝ առնուն զխնդիր սեռի՝ ՚ի հոլովս սեռական՝ կամ հայցական . զորօրինակ , * Խնամօղ արարածոց ։։ * Ընդունօղք զբանն կենաց ։։

Երբեմն առնուն նաև զխնդիր բնութե՟ ըստ պահանջելոյ բայիցն , յորոց բղխեն . զորօրինակ , * Քեզ ուրուոյ շնորհօղի մեզ զկեանս՝ փառք ։։ * Նորոգօղք տիեզերաց ՚ի նախահօրն յանցանաց ։։

Իսկ որք վարին չէզոքականապէս , ըստ բայիցն՝ յորոց ելանեն , առնուն զխնդիր . զորօրինակ , * Համբերօղ վշտաց ։։ * Հայեցօղ յօձն պղնձի ։։ * ՚Ի մեղաց զգուշացօղ ։։

Ընդունելութիւնք յանգեալք ՚ի եալ՝ եթէ ներգործականապէս առցին , իբր դերբայ վարին . զորօրինակ , * Աւանդեալ զթշնամին՝ խորտակեցիք ։։

Իսկ եթէ կրաւորաբար՝ կամ չէզոքականապէս առցին , երբեմն վարին իբր դերբայ . զորօրինակ , * Քաջալերեալ ՚ի բանից նորա՝ յաղթեցին թշնամեաց ։։ * Իջեալ մարմնով ՚ի գերեզման՝ զկապեալ հոգիսն վերածեաց ։։

Իսկ երբեմն վարին իբր ածական անուն՝ ը՟ կանոնի համաձայնութեան ածականաց . զորօրինակ , * Որ փակեալ դրամբք երեկոյին՝ երևեցար մետասանին ։։ * Մի՛ բարկանար եղբօր մեղուցելոյ ։։

Այսպիսի ընդունելութիւնք զայնպիսի խնդիրս առնուն , զորպիսի պահանջեն բայք իւրեանց . զորօրինակ , * Հաստատեալ զանձն

զանձն յանախտ կեանս առ ազգին անդր 'ի ձկնութիւնս ||:
* Նահատակք պանծալիք՝ և սիրեցեալք 'ի յերկնաւոր
հօրէն ||. * Օգնական է դարձեալ առ նա :

Ընդունելութիւն յանգեալք 'ի լոյ՝ իբր բայ վերին յարելով
եական բայս. և առնուն զայնպիսի խնդիր, զորպիսի
պահանջեն բայք իւրեանց. զոր օրինակ, * Տալոց է
ամենայն զհատուցին իւր վճիռ. * Որ դարձ յափշտակելոց
են ամպովք 'ի հրեշտակաց յերկինս ||. * Տեսանեմ միշտ
զօրն զայն՝ յորում 'ի դատաստան գնալոց եմ ||:

Ընդունելութիւնք յանգեալք 'ի ել՝ վերին իբր ածական. և
համաձայնութեան ածականաց յարին 'ի գոյականս. զոր օրինակ,
* Խոստովանեցար 'ի չարչարանս՝ չարչարելի բնութեամբ մարդ-
կան ||. * Պատմօղ լինել Պետրոսի և Յովհաննու ա-
րելոյ ||:

Եւ ոմանք հասարակօրէն առնուն զխնդիր 'ի տրական հո-
լովս. զոր օրինակ, * Գովելիք Այի, և բաղձալիք
վերնոցն պետութեց.

Յաղագս շաղման բանի.

Ի համաձայնութեան մասանց բանի կազմի բան. եր-
բեմն 'ի բազում բառից, և երբեմն 'ի սակաւուց՝
գոնէ յերից. այսինքն՝ 'ի բայէ, յանուանէ բային, և 'ի
խնդրոյ նորին. զոր օրինակ, * Հայր ծնանի զՈրդին ||.
Իսկ Հայրն է անուն բայի. ծնանի՝ բայ. զՈրդին՝ խնդիր:
Այլ երբեմն մի 'ի սոցանց զօրութեամբ դնի. զոր օրինակ,
* Ես վրիպեցայ ||. * Ես անհամբեր ||. * Յուսամ առ
ԱԾ ||. Զի ես վրիպեցայ 'ի բարւոյն. ես եմ անհամբեր.
զի յուսամ առ ԱԾ:

Իսկ երբեմն այլ մասունք բանի ևս յարին 'ի սոսա, ևս և-
բազում անուանք՝ որ զանազան պաշտօնի. զի իբր յատկա-
ցուցիչ, իբր բայայայտիչ, իբր ածական, եւն. որոց վասն
յղեալ աստ զերիս համառօտ օրինակս՝ լուծցուք զնոսին
կարգաւ՝ 'ի դիւրութիւն և 'ի յուսումն համբակաց:

Օրինակ.

Օրինակ. 1. * Գանձ ցանկալի հանգիցէ 'ի բերան իմաստնոյ. այր տգէտք կլլեն զնա ||. Առակ. 21. 20. 'Ի սմա՝ Գանձն է անուն բայի. Ցանկալի՝ է ածական նը. Հանգիցէ՝ է բայ. 'Ի բերան՝ է ներգոյական խնդիր բային. Իմաստնոյ՝ է յատկացուցիչ բերանոյն. Այր՝ է անուն բայի. Տգէտք՝ է ածական նը. Կլլեն՝ է բայ. Զնա՝ է խնդիր սեռի նը.

Օրինակ. 2. * Որդեակ իմ՝ մի նախանձիր ը̄ չարս. և մի ցանկանայցես կալ ը̄ նս̄ ||. Առակ. 24. 1. 'Ի սմա՝ որդեակն է կոչական անուն. Իմ՝ է ստացական դերանուն. և է լեալ ածական որդեկին. Մի նախանձիր՝ է բայ. որոյ անունն զօրութը̄ դնի. ք՝ դու. Ընդ չարս՝ է խնդիր նր. Եւ՝ է շաղկապ. Մի՝ է մակբայ. Ցանկանայցես՝ է բայ. որոյ անունն է նոյն զօրութը̄ իմացեալ դերանունն. այս է՝ դու. Կալ՝ է արգելիչ խնդիրոյ նր, ք ցանկանալոյն. Ընդ նոսա՝ է խնդիր կալոյն.

Օրինակ. 3. * Հրեշտակք երկնից փափաքէին հանդիսի խրախուսման սոցա. որք 'ի մահուան իւրեանց կենդանացան, եղին 'ի կամարն երկնից, խառնեցան 'ի դասն զուարթնոցն ||. Շար. 112. 'Ի սմա՝ հրեշտակք՝ է անուն բայի. Երկնից՝ է յատկացուցիչ հրեշտակաց. Փափաքէին՝ է բայ չէզոքական. Հանդիսի՝ է նորա խնդիր բնութեան 'ի տրական հոլովի. Խրախուսման՝ է յատկացուցիչ հանդիսին. Սոցա՝ է յատկացուցիչ խրախուսման. Որք՝ յարաբերական դերանուն ա- յս. և է անուն բայից՝ կենդանացան, եղին և խառնեցան. 'Ի մահուան իւրեանց՝ է երկրորդական խնդիր բայիս կենդանա- ցան. որոյ բուն խնդիրն զօրութեամբ դնի 'ի գործիական հոլովի. ք է՝ հոգւով. Իւրեանց՝ է յատկացուցիչ մահուան. Եղին՝ է չէզոքական բայ. 'Ի կամարն՝ է խնդիր նր. Երկ- նից՝ է յատկացուցիչ կամարին. Խառնեցան՝ է ևս չէզոքական բայ. 'Ի դասն՝ է խնդիր նր. Զուարթնոցն՝ է յատկա- ցուցիչ դասին.

ՎԱԽՃԱՆ.